Եթե չկան հիմքեր բողոքը վերահասցեագրելու կամ վերադարձնելու համար, ապա ՏԻՄ-ը պետք է սկսի բողոքի ուսումնասիրություն: Այդ մասին ձեզ պետք է տեղեկացնեն 3 օրվա ընթացքում:
Բողոքի ուսումնասիրության փուլում ձեզանից կարող են պահանջել լրացուցիչ տեղեկություն, ինչպես նաև ձեզ հրավիրել լսումների:
Ուսումնասիրության հիման վրա ՏԻՄ-ը պետք է ընդունի համապատասխան վարչական ակտ (որոշում)՝ մերժելով կամ բավարարելով բողոքը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՈՂՈՔԱՐԿՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՉԻ ԿԻՐԱՌՎՈՒՄ, ԱՅՍԻՆՔՆ ԴՐԱՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԿԱՏԱՐՎՈՒՄ, ՏՈՒԳԱՆՔԸ ՉԻ ԳԱՆՁՎՈՒՄ, ՏՈՒՅԺԵՐ ՉԵՆ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՒ ԱՅԼՆ: ԱՅՍ ԿԱՆՈՆԸ ՉԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ՏՈՒՐՔԵՐԻ ՈՒ ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՄԱՆԸ: ԴՈՒՔ ՉԵՔ ԿԱՐՈՂ ՀԵՏԱՁԳԵԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԿԱՄ ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ:

## ԿԱՊ

(+374 10) 511379

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

mta@mta.gov.am, mtai.secretariat@gmail.com



Սույն բրոշյուրը լույս է տեսնում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:



Բրոշյուրում առկա տեսակետները անպայմանորեն չեն արտացոլում ԳՄՀԸ, ՇԶՀԳ կամ համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:



Բրոշյուրը պատրաստվել է ADVISE CONSULTING կողմից:

2021


# ԻՆՉ Է ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ

## ՀԱՍԿԱՆԱՆՔ, ԹԵ ԻՆՉ Է ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ

Երբ մասնավոր անձը դիմում է Տեղական ինքնակառավարման մարմնին (ՏԻՄ) և ցանկանում է ստանալ որևէ իրավունք, թույլտվություն, կամ երբ մարմինն իր նախաձեռնությամբ պատասխանատվության է ենթարկում որևէ սուբյեկտի, ապա ՏԻՄ-ը ընդունում է վարչական ակտ:

Տարատեսակ թույլտվությունները, հողահատկացման, հողի կատեգորիայի, գործառնական նշանակության փոփոխության որոշումները, ճարտարապետանախագծային առաջադրանքների տրամադրումը, ինքնակամ շինության օրինականացման որոշումները, վարչական տույժեր (տուգանքներ) նշանակելու մասին որոշումները ՏԻՄ-ի կողմից ընդունված վարչական ակտերի օրինակներ են:

Որոշ դեպքերում ՏԻՄ-ը կատարում է որոշակի գործողություն, կամ չի կատարում մի գործողություն, որը պետք է կատարել, ու նման գործողությունը կամ անգործությունը բացասական հետևանքներ է առաջացնում անձի համար:
Անձը, որին վերաբերում է վարչական ակտը, ՏԻՄ-ի գործողությունը կամ անգործությունը, կարող է դրանց դեմ ներկայացնել վարչական բողոք:

Անձինք իրավունք ունեն բողոքարկելու այսպիսի որոշումները, ինչպես նաև ՏԻՄ-ի այլ գործողությունները կամ նույնիսկ անգործությունը՝ իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով:

Այսինքն, վարչական բողոք ներկայացնելիս դուք պահանջում եք փոփոխել, վերացնել կամ ընդունել որոշակի վարչական ակտ, կատարել որոշակի գործողություն, կամ զերծ մնալ որոշակի գործողություն կատարելուց:

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔՆ ԱՅՆ ԲՈՂՈՔՆ Է, ՈՐԸ ԲԵՐՎՈՒՄ Է ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԻՋԱՄՏՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԱԿՏ) ԴԵՄ:

## Ե՞ՐԲ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔ

Եթե կարծում եք, որ ՏԻՄ-ի ընդունած կամ մերժած վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը հակասում են օրենքին և խախտում են ձեր իրավունքները կամ բացասաբար ազդում  ձեր շահերի վրա, ապա կարող եք ներկայացնել վարչական բողոք:

ՏԻՄ-Ը ԻՐԱՎԱՍՈՒ Է ԿԱՏԱՐԵԼ ՄԻԱՅՆ ԱՅՆՊԻՍԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՆ ՕՐԵՆՔՈՎ: ՆԱԽՔԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ, ՓՈՐՁԵՔ ՀԱՍԿԱՆԱԼ՝ ԱՐԴՅՈ՞Ք ՏԻՄ-Ը ԻՐԱՎԱՍՈՒ Է ԱՆԵԼ ԱՅՆ, ԻՆՉ ԴՈՒՔ ՆՐԱՆԻՑ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՔ: ԵԹԵ ՎՍՏԱՀ ՉԵՔ, ԿԱՐՈՂ ԵՔ ԽՈՐՀՐԴԱԿՑԵԼ ԻՐԱՎԱԲԱՆԻ ՀԵՏ:  ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՏԻՄ-Ը ՊԱՐՏԱՎՈՐ Է ՕԺԱՆԴԱԿԵԼ ԴԻՄՈՒՄԻ (ԲՈՂՈՔԻ) ՁԵՒԱԿԵՐՊՄԱՆԸ, ՈՒՍՏԻ ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՐՑԵՐՈՎ ԴԻՄԵԼ ՆԱԵՒ ՏԻՄ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ:

## Ի՞ՆՉ ԱԿՆԿԱԼԵԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԻՑ

Երբ քաղաքացին ներկայացնում է վարչական բողոք, ՏԻՄ-ը պետք է հարուցի վարչական վարույթ, ուսումնասիրի բողոքն ու կայացնի որոշում (վարչական ակտ): Եթե բողոքում բարձրացված հարցը չի մտնում ՏԻՄ-ի իրավասության մեջ, ապա ՏԻՄ-ը պետք է այն վերահասցեագրի պատշաճ հասցեատիրոջը (այլ իրավասու մարմնի), կամ վերադարձնի այն ձեզ՝ նշելով պատճառների մասին:

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ** ԺԱՄԿԵՏԻՑ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑԸ ԿՈՐՑՆՈՒՄ Է ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ԲԱՑ ԹՈՂՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԲՈՂՈՔ ԲԵՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ:

Այստեղ ևս կարող են լինել բացառություններ, երբ բողոք բերելու ժամկետը բաց թողնելը կապված է անհաղթահարելի ուժի առաջացրած հետևանքների հետ: Անհաղթահարելի և արտակարգ հանգամանքներ կարող են համարվել ռազմական գործողությունները, բնական աղետները, պետական մարմինների ակտերը և այլն: Այս դեպքում հնարավոր է ժամկետի վերականգնում:

## ԿԱՊ

(+374 10) 511379

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

mta@mta.gov.am, mtai.secretariat@gmail.com



Սույն բրոշյուրը լույս է տեսնում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:



Բրոշյուրում առկա տեսակետները անպայմանորեն չեն արտացոլում ԳՄՀԸ, ՇԶՀԳ կամ համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:



Բրոշյուրը պատրաստվել է ADVISE CONSULTING կողմից:

2021


# ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

## ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Վարչական բողոքը ներկայացնելու համար սահմանված է հստակ ժամանակացույց: Ձեր իրավունքները պաշտպանելու համար բողոքն անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ ժամկետներում:

- Եթե վարչական ակտն ուժի մեջ է մտել, ապա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամիսների ընթացքում
- Եթե վարչական մարմնի կողմից գործողություն է կատարվել, ապա կատարելու օրվանից մեկ ամսվա ընթացքում
- Եթե վարչական մարմնի կողմից անգործություն է ցուցաբերվել, ապա ցուցաբերելու օրվանից 2 ամիսների ընթացքում
- Եթե գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չէ, ապա  վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում

ՏԱՐԻՆԵՐՈՎ, ԱՄԻՍՆԵՐՈՎ ԿԱՄ ՕՐԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԱՅՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՏԱՐՎԱ, ԱՄՍՎԱ, ԱՄՍԱԹՎԻ ԿԱՄ ՎՐԱ ՀԱՍԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՐԴ ՕՐՎԱՆԻՑ, ՈՐՈՎ ՈՐՈՇՎԱԾ Է ԴՐԱ ԺԱՄԿԵՏԻ ՍԿԻԶԲԸ:

**Ի՞նչ է սա նշանակում.** վարչական ակտի բողոքարկման համար սահմանված երկամսյա ժամկետը հաշվարկվում է ոչ թե դրա ուժի մեջ մտնելու օրվանից, այլ դրան հաջորդող օրվանից: Այլ կերպ ասած, եթե անձն իրազեկվել է հունիսի 1-ին, ապա ակտն ուժի մեջ է մտնում հունիսի 2-ին, իսկ բողոքարկման համար սահմանված ժամկետի վերջին օրն է օգոստոսի 3-ը:

**Ամիսներով** հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Եթե ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է այն ամսին, որը չունի համապատասխան ամսաթիվ, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը:

**Տարիներով** հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին:

**Հիշեք**. Նշված ժամկետները բաց թողնելուց հետո ակտը դառնում է անբողոքարկելի:

Բողոքը համարվում է ներկայացված դիմումը փոստով ուղարկելու, առձեռն մուտքագրելու կամ առցանց ներկայացնելու օրը:



## Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՑԵԼ Է

Բողոքարկման ժամկետը բաց թողնելը կարող է համարվել հարգելի այն դեպքում, երբ բաց թողնելու պատճառները կախված չէին բողոքը ներկայացնող անձից:

Գործնականում նման իրավիճակի օրինակներ են այն դեպքերը, երբ ժամկետը բաց թողնելը պայմանավորված է ծանր հիվանդությամբ կամ նմանատիպ այլ հանգամանքներով: Նման հանգամանքների հստակ ցանկ օրենքով սահմանված չէ, և վարչական մարմինը պետք է յուրաքանչյուր դեպքում գնահատի գործի հանգամանքները և որոշի բողոքաբերի մեղքի առկայությունը կամ բացակայությունը:

Եթե այնուամենայնիվ որոշվել է, որ ժամկետը բաց թողնելու պատճառը կախված չէր բողոքարկողից, ապա այդ պատճառները վերացնելուց հետո վարույթի մասնակիցը կարող է բողոք ներկայացնել 15 օրվա ընթացքում՝ նշելով ժամկետը բաց թողնելու պատճառը կամ պատճառները:

## ԻՆՉՊԵ՞Ս ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԲՈՂՈՔԸ

Բողոքը կարելի է ներկայացնել առձեռն կամ ուղարկել փոստով: Եթե ունեք էլեկտրոնային ստորագրություն (EID) կամ բջջային ստորագրություն (MID), ապա բողոքը կարող եք ներկայացնել նաև առցանց՝ **https://e-request.am/hy/** հարթակի միջոցով:



## ԿԱՊ

(+374 10) 511379

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

mta@mta.gov.am, mtai.secretariat@gmail.com

Սույն բրոշյուրը լույս է տեսնում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Բրոշյուրում առկա տեսակետները անպայմանորեն չեն արտացոլում ԳՄՀԸ, ՇԶՀԳ կամ համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

Բրոշյուրը պատրաստվել է ADWISE CONSULTING կողմից:

2021

# ԻՆՉ ՊԵՏՔ Է ՊԱՐՈՒՆԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ

## Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ՊԱՐՈՒՆԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ

Վարչական բողոքում հարկավոր է ներկայացնել բողոքարկման առարկան՝ պատճառն ու առիթը, թե ինչու է տվյալ բողոքը ներկայացվում:

**Հիշեք**. Ընթերցողը պետք է հասկանա ոչ միայն պատճառը, թե ինչու եք ներկայացնում վարչական բողոքը, այլ նաև պահանջը՝ թե այդ բողոքի արդյունքում ինչ եք ուզում փոփոխել: Նաև փորձեք հնարավորինս մանրամասն նկարագրել բոլոր փաստերը, որոնցով հիմնավորվում է ձեր պահանջը: Առկայության դեպքում՝ կցեք այդ փաստերը հիմնավորող փաստաթղթեր:

Բացի այդ կա որոշակի պարտադիր տեղեկություն, որ պետք է ներկայացված լինի բողոքում, քանի որ եթե նույնիսկ ստացվել է փաստաթուղթ, որը վերնագրված է որպես «Բողոք», «Գանգատ» և այլն, դա դեռևս չի նշանակում, որ այն հանդիսանում է վարչական բողոք՝ օրենքի իմաստով: Մասնավորապես, բողոքը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.



- Այն վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է բողոքը

**Օրինակ.** Բողոքը կարող է ներկայացվել Համայնքապետարանին՝ համայնքապետի անունով:

ՕՐԵՆՔՈՒՄ ՉԿԱ ՀՍՏԱԿ ՊԱՀԱՆՋ՝ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՍԱԿԱՅՆ ՎԵՐՋԻՆՍ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ԿՀԵՇՏԱՑՆԵՔ ՏԻՄ ԱՇԽԱՏԱԿՑԻ ԿԱՊԸ ՁԵՋ ՀԵՏ՝ ՀԱՐՑԵՐ ԿԱՄ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

- Բողոքարկման առարկան
- Բողոք բերողի պահանջը
- Բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը
- Բողոքը կազմելու տարեթիվը, ամիսը և ամսաթիվը
- Բողոք բերող ֆիզիկական անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից բողոք բերող անձի ստորագրությունը

## ՍԽԱԼՆԵՐ ԵՎ ՋՆՋՈՒՄՆԵՐ... ՆՈՐԻ՞Ց ՍԿՍԵԼ

Օրենքի համաձայն՝ ներկայացրած փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում ՏԻՄ-ը պարտավոր է այդ փաստաթղթերը ներկայացնողների ուշադրությունը հրավիրել դրանց վրա՝ շտկելու նպատակով, ինչպես նաև նրանց ներկայությամբ ինքնուրույն ուղղել ներկայացված փաստաթղթերում առկա ակնհայտ սխալները, վրիպակները:

ՏԻՄ-Ը ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՉԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՅԴ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՄԻԱՅՆ ԱՅՆ ՊԱՏՃԱՌՈՎ, ՈՐ ԴՐԱՆՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՆՄԱՆ ՍԽԱԼՆԵՐ, ՋՆՋՈՒՄՆԵՐ, ՔԵՐՎԱԾՔՆԵՐ ԿԱՄ ՎՐԻՊԱԿՆԵՐ:

**Հիշեք**. Բողոքը կարող է մերժվել կամ վերադարձվել, եթե դրանում առկա են էական թերություններ: Օրինակ՝ բողոքն անանուն կամ անստորագիր է, ուղղված չէ որևէ վարչական մարմնի, նշված չէ բողոքարկվող ակտը կամ բողոքաբերի պահանջը և այլն: Օրինակ, եթե դիմումը ներկայացվել է առանց ստորագրության, և վարչական մարմինը չի կարողանում պարզել, թե այն ով է ներկայացրել, կարճում է վարչական վարույթը: ՏԻՄ-ը նաև չի կարող ընդունել այլ մարմիններից ստացված փաստաթղթեր, եթե դրանցում կան սխալներ:

ՍԱԿԱՅՆ ԱՄԵՆ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔ ՉԻ ԿԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼ ՎԱՐՉԱԿԱՆ՝ ՕՐԵՆՔԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ:
ՕՐԻՆԱԿ, ՊԱՐՏԱԴԻՐ Է, ՈՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԻ ՀԵՆՑ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ: ԱՅՍՊԵՍ, ՔԱՂԱՔԱՑԻՆ ԿԱՐՈՂ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ «ԲՈՂՈՔ» ԻՐ ՀԱՐԵՎԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՍՊԻ ՎՆԱՍՄԱՆ, ԿԱՄ ՀԱՐԵՎԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՍԱԿԱՅՆ ՍԱ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔ ՉԻ ՀԱՄԱՐՎԻ:



## ԿԱՊ

(+374 10) 511379

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

mta@mta.gov.am, mtai.secretariat@gmail.com

Սույն բրոշյուրը լույս է տեսնում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Բրոշյուրում առկա տեսակետները անպայմանորեն չեն արտացոլում ԳՄՀԸ, ՇԶՀԳ կամ համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

Բրոշյուրը պատրաստվել է ADVISE CONSULTING կողմից:

2021

# ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՍԿԱՆԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԼԵԶՈՒՆ

## ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՍԿԱՆԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԼԵԶՈՒՆ

Վարչական իրավունքն ունի իր դրույթներն ու հասկացությունները: Այստեղ կարող ենք պարբերաբար հանդիպել բառակապակցությունների, որոնց նշանակությանը լիովին ծանոթ չենք: Վարչական բողոքի ողջ գործընթացն ավելի լավ հասկանալուն և գնահատելուն, ինչպես նաև համապատասխան մասնագետների հետ արդյունավետ հաղորդակցվելուն կօգնի այս փոքրիկ բառարանը:

Վարչական իրավունքում առանցքային նշանակություն ունեն մի քանի հասկացություններ: Հասկանանք դրանցից յուրաքանչյուրը:

### ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ըստ օրենքի, տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակում վարչական մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը: Ընդ որում, ավագանին ու համայնքի ղեկավարն առանձին մարմիններ են: Ուստի չեք կարող ավագանու որոշման դեմ վարչական բողոք ներկայացնել համայնքի ղեկավարին, կամ հակառակը:

### ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վարչական մարմնի՝ այլ անձանց ուղղված գործունեությունը, որն ազդում է նրանց վրա բնորոշվում է, որպես վարչարարություն:

**Ի՞նչ է սա նշանակում.** Վարչարարությունը ենթադրում է որոշակի վարչական ակտի ընդունում, գործողություն կամ անգործություն, որոնք ազդում են այլ անձի իրավունքների կամ պարտականությունների վրա, կամ այլ կերպ ասած փաստական հետևանքներ են առաջացնում նրա համար:

**Օրինակ.** ՏԻՄ-ը տալիս է գովազդի թույլտվություն, կամ մերժում է շինարարության թույլտվության տրամադրումը, կամ սահմանված ժամկետում չի տրամադրում ճարտարապետաշինարարական առաջադրանք, կամ ապամոնտաժում է ապօրինի կառուցված կրպակ: Այս բոլոր գործողություններն ու անգործողությունները հանդիսանում են վարչարարություն:

### ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

Վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

**Ի՞նչ է սա նշանակում.** Այն բոլոր քայլերն ու գործողությունները, որոնք վարչական մարմինը պետք է կամ կարող է կատարել վարչական ակտն ընդունելու ճանապարհին՝ ներառյալ վարույթի հարուցումը, գործի ըստ էության քննարկումը և դրա վերաբերյալ որոշման կայացումը, հանդիսանում են վարչական վարույթ:

### ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔ

Վարչական բողոքն այն բողոքն է, որը բերվում է վարչական ակտերի, դրանց միջամտող դրույթների, վարչական մարմնի գործողության կամ նույնիսկ վերջինիս անգործության դեմ:

## ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ, ՏԻՄ-Ը ՊԱՐՏԱՎՈՐ Է.

**1.** Իրականացնել գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննություն:

**2.** Հնարավորություն տալ քաղաքացուն իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների: Այս պարտականությունն ունի մեծ կարևորություն, քանի որ քաղաքացին պետք է հնարավորություն ունենա ուսումնասիրել վարույթի նյութերը և պատրաստ լինել հերքելու ի վնաս իրեն բերվող ապացույցները և ապացուցել իր օգտին խոսող փաստերը:

**3.** Մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Սա նշանակում է, որ վարչական մարմինը պետք է հնարավորություն ընձեռի միջամտող ակտի հասցեատիրոջը՝ օրինակ քաղաքացուն, որին սպառնում է տուգանք, ներկայացնելու իր դիրքորոշումը և փաստարկները:




## ԿԱՊ

(+374 10) 511379

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

mta@mta.gov.am, mtai.secretariat@gmail.com



Սույն բրոշյուրը լույս է տեսնում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:



Բրոշյուրում առկա տեսակետները անպայմանորեն չեն արտացոլում ԳՄՀԸ, ՇԶՀԳ կամ համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:



Բրոշյուրը պատրաստվել է ADVISE CONSULTING կողմից:

2021

# ԻՆՉ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՎ Է ՊԱՐՏԱՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼ ՏԻՄ-Ը. ԻՄԱՑԵՔ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

## Ի՞ՆՉ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՎ Է ՊԱՐՏԱՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼ ՏԻՄ-Ը. ԻՄԱՑԵՔ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Կարևոր է իմանալ, որ ՏԻՄ-ը պետք է առաջնորդվի օրենքով սահմանված մի շարք հիմնարար սկզբունքներով: Վերջիններս հիմնաքարային նշանակություն ունեն ցանկացած վարչարարության ժամանակ: Ձեր իրավունքն է պահանջել այս սկզբունքների կատարումը:

Տեղեկացված եղեք Ձեր իրավունքների մասին: Եթե կարծում եք, որ դրանք խախտվել են, նշեք դրա մասին ձեր բողոքում:

**Օրինականություն**. Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը: Վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով: Սա նշանակում է, որ ՏԻՄ-ը չի կարող իրականացնել որևէ գործողություն, որի լիազորությունը նրան տրված չէ օրենքով:

**Ձևական պահանջները չարաշահելու արգելք**. Ձևական պահանջների պահպանման նպատակով արգելվում է քաղաքացիներին ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

**Հայեցողական լիազորությունների սահմանափակում**. Եթե հնարավոր են երկու կամ ավելի իրավաչափ լուծումներ, ՏԻՄ-ը պետք է ընտրի այն լուծումը, որն առավել նպաստում է անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը, և միաժամանակ համահունչ է իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներին:

**Կամայականության արգելք**. Արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք: Այսինքն, եթե գոյություն է ունեցել նախադեպ և ՏԻՄ-ը որևէ գործում ցուցաբերել է մի մոտեցում, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ մոտեցումը պահպանել:

**Վարչարարության համաչափություն**. Վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

**Հավաստիության կանխավարկած**. ՏԻՄ-ի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ քաղաքացու ներկայացրած տվյալները համարվում են հավաստի, քանի դեռ ՏԻՄ-ը հակառակը չի ապացուցել: Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով: Եթե ՏԻՄ-ը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

**Տնտեսավարություն**. ՏԻՄ-ն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել սեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը:



## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԹԵԺ ԳԾԻ ՀԱՄԱՐՆ Է 116

Եթե բողոքը հիմնավոր է, ՄԻՊ-ը առաջարկում է խախտող մարմնին վերացնել թույլ տրված խախտումները:

**Հիշեք**. ՄԻՊ-ը չի կարող որևէ կերպ պարտադրել վարչական մարմնին: Ուստի, որպեսզի բաց չթողնեք վարչական բողոք ներկայացնելու կամ դատարան դիմելու ժամկետները, ցանկալի է ՄԻՊ-ին դիմել հնարավորինս շուտ: Նաև նախընտրելի է դիմել թեժ գծի միջոցով, որպեսզի առավել արագ ստանաք պատասխան:

**Այլ տարբերակներ.** Կան դեպքեր, երբ ՏԻՄ մարմինների նկատմամբ որոշակի վերահսկողություն են իրականացնում մարզպետարանն ու ոլորտային նախարարությունները: Դա, մասնավորապես, տեղի է ունենում, երբ ՏԻՄ-ը պետության կողմից ֆինանսավորվող ծրագրեր է իրականացնում, կամ որոշումներ է կայացնում պետական գույքի վերաբերյալ: Եթե ձեր բողոքը կապված է նման իրավիճակի հետ, ապա հնարավոր է, որ մարզպետարանը կամ իրավասու նախարարությունը (որպես կանոն՝ տարածքային կառավարման նախարարությունը) նույնպես կարողանա լուծում տալ ձեր խնդրին:

## ԿԱՊ

(+374 10) 511379

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

mta@mta.gov.am, mtai.secretariat@gmail.com

Սույն բրոշյուրը լույս է տեսնում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Բրոշյուրում առկա տեսակետները անպայմանորեն չեն արտացոլում ԳՄՀԸ, ՇԶՀԳ կամ համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

Բրոշյուրը պատրաստվել է ADVISE CONSULTING կողմից:

2021

# ԻՆՉ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ ԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԻՆ

## Ի՞ՆՉ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ ԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԻՆ

**Դատական պաշտպանություն.** Ցանկացած անձ, որի իրավունքները խախտվել են վարչական մարմնի կողմից, կարող է դիմել դատարան: Դատարան կարող եք դիմել ինչպես վարչական բողոք ներկայացնելուց հետո (եթե համաձայն չեք կայացված որոշման հետ), այնպես էլ առանց վարչական բողոք ներկայացնելու:
Վարչական ակտի, կամ վարչական մարմնի գործողությունների կամ անգործության դեմ կարելի է հայց ներկայացնել վարչական դատարան:

**Փաստաբան.** Հայցը կարելի է ներկայացնել անձամբ կամ փաստաբանի միջոցով: Որպես կանոն, նախընտրելի է դիմել փաստաբանի, սակայն եթե չունեք նման հնարավորություն, ապա կարող եք հայցը գրել ու ներկայացնել ինքնուրույն: Որոշ կատեգորիայի անձանց հասանելի է հանրային պաշտպանի կողմից անվճար փաստաբանական օգնություն:

ԱՆՎՃԱՐ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻՆ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ԱՅՍՏԵՂ՝ WWW.HPG.AM



**Վճարումներ**. Հայցը ներկայացնելու համար պետք է վճարել պետական տուրք: Ներկայումս ամեն պահանջի համար պետական տուրքը կազմում է 4 000 ՀՀ դրամ: Եթե դուք վիճարկում եք (բողոքարկում եք) վարչական ակտ, կամ ուզում եք պարտավորեցնել վարչական մարմնին ընդունել որոշակի ակտ կամ կատարել որոշակի գործողություն, ապա հայցը պետք է ներկայացնեք երկու ամիսների ընթացքում: Եթե վիճարկում եք գործողություն, ապա պետք է դատարան դիմեք մեկ ամսվա ընթացքում: Որոշ դեպքերում նախատեսված են ավելի երկար ժամկետներ:

## ԻՆՉՊԵ�almՍ ԿԱԶՄԵԼ ՀԱՅՑԸ

Հայցում պետք է հստակ նշել՝

- դատարանի անվանումը (ՀՀ վարչական դատարան),
- ձեր անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, բնակության հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է բնակության վայրից),
- վարչական մարմնի անվանումը (օրինակ՝ N համայնքապետարան) և այդ մարմնի գտնվելու հասցեն,
- հայցի էության հակիրճ նկարագրությունը,
- այն փաստերը, որոնց վրա հիմնվում է ձեր պահանջը,
- ձեր պահանջը հիմնավորող փաստարկները,
- ձեր պահանջը (օրինակ՝ անվավեր ճանաչել N համայնքապետարանի N թվականին ընդունված N համարով ակտը),
- նշում այն մասին՝ արդյո՞ք մինչ դատարան դիմելը ներկայացրել եք վարչական բողոք, և ո՞րն է եղել դրա արդյունքը,
- գրավոր ապացույցների ցանկը, եթե այդպիսիք կցվում են հայցին,
- հայցադիմումը ներկայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը:

Հայցադիմումը պետք է ստորագրել և ներկայացնել դատարան անձամբ, կամ ուղարկել փոստի միջոցով:

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԸ, ԵՎ ԱՅԼ ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԱՅՍՏԵՂ՝ WWW//COURT.AM

**Մարդու իրավունքների պաշտպան.** Ցանկացած անձ, որի իրավունքները խախտվել են վարչական մարմնի կողմից, կարող է դիմել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին (ՄԻՊ): Բողոքը կարող եք ներկայացնել գրավոր կամ բանավոր: Բողոքում պետք է նշեք ձեր անունն ու ազգանունը, բնակության վայրը (հասցեն), հեռախոսահամարը: Նաև պետք է նշեք, թե ձեր որ իրավունքներն են խախտվել, ում կողմից և ինչպես: